

3. Էջ 256—283. Կրկին փրկափայլից ասացեալ է: Անցանքն ամբ կենաց մարդկան. իսկ ճշմարտութիւնն մնայ յաւիտեան... (Այլ եւ այլ վճիռք, արձակ շարադրութեամբ):

4. Էջ 252. Գովք Ս. Աստուածածնին:

Յոյս իմ վասն այն ի քեզ դիմէ.

Նորոգող ինձ զքեզ կոչէ...

Տունք՝ ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ:

5. Էջ 253. Գովասանութիւն սրբուհոյ Աստուածածնին:

Յոյս մեր ի քեզ է կենսատու

Նպաստ մեղաւորացս միշտ դու...

Տունք՝ ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ:

6. Էջ 254. Վասն ննջեցելոյ ի յաւուր անկողնային ասացեալ բանս:

Յայնժամ մեռեալքն ամենեքեան

Յառնեն եւ զան ի դատաստան...

Տունք՝ Յակոբ վարդապետ եւ եպիսկոպոս:

7. Էջ 284—287. Ոտանաւորս ասացեալ վասն առաքիւնացն:

Յորժամ դայցէ Տէր քո յայգոյդ,

Թժով խնդրէ պտուղ ծառոյդ,

Ի թիւ արկեալ զհամար ծանրոյդ,

Ստանալ պսակ քեզ ըստ գործոյդ...

Տունք՝ Յակոբ եպիսկոպոս եւ Փիլգամ-դացոյ ասացեալ:

8. Էջ 287—291. Վասն բարեգէտ կենցաղաւորելոյ:

Աստուածային դրախտ տնկեալ

Ծառ լուսեղէն պտղաբերեալ,

Պայծառազեղ հոգով ծաղկեալ,

Ի յառազաստն զարդարեալ:

Տունք Ա.—Բ ՏԵՍ:

9. Էջ 292—302. Խրատք վերջին օծման:

Առ այս էջ 291 կայ խրատ. «Յայս օրհնութիւնս ուրբ ձեռն իւրոյն միշտ եպիսկոպոսն միայն ինքն առնէ ի վերջն պատարագին, Մեծի հինգշաբթի, առ ընդ իւր ունելով զ. է. քահանայս. եւ զատ յեպիսկոպոսէ դաւառին ոչ ոք համարձակից(ի) օրհնել. եւ ապա բաշխէ դաւառին իւրոյ բոլոր եկեղեցեաց, առ ի օծանել զհիւանդս, ըստ կանոնի վերայ գրեալ ի վարդն վերջին օծման խորհրդոյն:

Քահանայն կատարելով զուրբ խորհուրդս զայս: Նախ պատրաստեալ հոգասցէ սեղան ծածկեալ կտաւովք...

Էջ 293—296. Արարողութիւն վերջին օծման: Եւ այսպէս սկսանի քահանայն. Տէր եթէ զըթուս... Ազօթքս ասայ. Տուր մեզ, Տէր Հայր սուրբ...

Էջ 296—297. Խրատ զգուշութեան պատկանաւոր վասն վերոյասացեալ արարողութեան վերջին օծման: Արդ նախապետարար գիտել արժան իսկ է...

Էջ 298—302. (Կանոն հոգեվարի):

10. Էջ 305—309. Վասն Ս. Անտոնի արարեալ հրաշքն պատմութեան: Ի քաղաքի միում, յորում բնակէր Ս. Անտոն...

11. Էջ 309—317. Քարող վասն պահոց եւ փորձանաց սատանայի, ի բան՝ Յայնժամ վարեցաւ Յիսուս... Վարդապետք ասեն թէ հաւատացեալքն...

12. Էջ 317—322. Նորին քարող ի բան Սողոմոնի որ ասէ. Յիշեայ զփրկիչն քո յաւուր մահուան քոյ: Ի մէջ ամենայն կենդանեաց մարդս միայն է բանաւոր...

13. Էջ 322—329. Քարող վասն պաշտաման պատուհասի ի բան Յովելայ, Փող հարէք... փոփոխական է մարդոյ բնութիւն...

14. Էջ 331—332. Սուրբ հօրն Յովհաննու Մանգալունայ ասացեալ է վասն չլամպա-սելոյ զքահանայս եւ զվարդապետս եւ զփո-ղովուրդս: Մթերիմ սղոյ եւ աղձամուղջ տրամութեան...

15. Էջ 332—336. Կանոն վասն խոս վանութեան: Գրեմք կանոն վասն խոստով-նութեան, որ յԱստուծոյ մեղ բարի պարզ-ւեալ է...

16. Էջ 337—338. Օրհնութիւն մոմի Տեառն ընդ առաջի աւուրն: Առաջնորդ կամ աւագերէցն զըսգեստաւորեալք... Աղ. Ամե-նակարող եւ մշտնջենաւոր Աստուած...

17. Էջ 338—341. Օրհնութիւն ոստոյ: Ի Կիրակէի ծաղկազարդին նախ քան զպատա-րագն... Աղ. Ամենակարող եւ մշտնջենաւոր Աստուած...

18. Էջ 342—343. Աւրհնութիւն սեղա-նոյ. զոր չըջեցուցանեն առանց տաճարի: Նախ լուանան խառնամբ ջրոյն եւ ընդ-զինին... Աղ. Տէր Աստուած ամենա-կարող...

19. Էջ 344—346. Աւրհնութիւն եկեղե-ցական զգեստուց:

Աւրհնութիւն Սկոյ եւ Մաղմայի: Աւրհնու-թիւն Աղի եւ Զրոյ:

20. Էջ 347. Կերպ ներդրութեանց զոր ժԱ. Կղեմէս սրբազան փափն պարգեւէ...

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Ա. մաս, էջ 1. «Յի-շատակ է Քրիստոնէական վարդապետու-թիւնս եւ փրկափայլութիւնս վասն հոգւոյ տեառն Յակոբայ Կոստանդնուպոլսեցւոյ եւ եպիսկոպոսի Ատանոյ առ սուրբ Մարիամ Եղիպտացին, որ է բնակարան աղղին Հայոց ի մեծն Հոռոմ. որք հանդիպիք միով Հայր մերիւ ի մաքրափայլ աղօթս ձերս եւ դուք յիշեալ լինիք առաջի Քրիստոսի. ամէն: Գրեցաւ յամի Տեառն Ռէժիմ.ին (1728) եւ ապրիլի ժե.ին:

42.

ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Թ. 21: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ. 24: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21.3 × 15 հմ.: — ՆԻԻԹ՝ քուրք: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դա-տարկ քղ. 18—24: Թղ. 1 կիսով պատում: — ԿԱԶՄ՝ քղքակազմ: — ԳԻՐ՝ նոսր: — ԳԻԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Հին քիւ X:

Մատենա է «Յաղագս խոր(հրդոց եկե-ղեցւոյ) եւ ամենասուրբ (հաղորդութեան) քաղուածք ի բարոյական (աստուածաբանու-թեան)»:

Թղ. 1ա—15բ. Հց. Քանի են խորհուրդք եկեղեցւոյ: Պիս. Եօթն. այս ինքն Մկրտու-նէան, զըրջին...

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 18ա. Յիշատակ է ք. ըս տեառն Գրիգոր պատրիարքի Անդրիա-ն: պօլսեցւոյ ի յեկեղեցին սրբուհւոյ Մա-րիամու Եղիպտացւոյն, որ եղաւ ի թւին 1744, յօգոստոսի 15:

43.

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

Թ. 27: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ. 122: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21 × 13: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱԶՄ՝ չուսի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: Կը պակսին 1—16 էջերը: Դատարկ էջ 253—260: — ԳԻՐ՝ նոսր: — ՏԵՂԻ, ԳԻԻԶ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

Մատենա է Հարցմունք եւ պատասխա-նիք ի վարդապետութենէն կաթողիկէ եկե-ղեցւոյ:

44.

ՀՐԱՀԱՆԳ ԴԱԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱԽԱՏՈՅ

Թ. 20: — 1860:

ԹՈՒՂԹՔ. 50: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22 × 16: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱԶՄ՝ քղքեայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ շղագիր, մատիտով գրում:

Մատենա է «Հրահանգ դաւանութեան հաւատոց:

Թղ. 1ա. Կ'ըսուի. «Խնդրեաց յինչն այսպիսի ինչ ձեռնարկ դործոյ Պետրոս վրդ.ն Ալթունեան, որ ապա եպիսկոպոս յէջմիա-ծին, մինչ կայի տակաւին ի քառասունն քահանայական կրթութեան, խօսելով ի զէմս լուսաւորչեան եկեղեցւոյ»: Այս կը պա-տահի 1830ին ի Սամաթիա Ս. Գէորգ եկե-ղեցւոյ մէջ, որուն առաջնորդն էր նա յայն-ժամ». կը գրուի 1860ին: Գրողին անունն չէ յիշուած:

Թղ. 2ա. Հանդանակ առաքելոց, որ պա-րունակէ երկոտասան աստիճանս:

Կը յաջորդէ մէն մի հատուածին մեկ-նութիւնը:

45.

ԴԱԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱԽԱՏՈՅ ԵԿԵՂԵ-ՑԵԱՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Թ. 44: — 1780էն ետք:

ԹՈՒՂԹՔ. 20: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19.2 × 11.5 հմ.: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱԶՄ՝ քղքա-կազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոսր: — ԿԻՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳԻԻԶ, ՏԵՂԻ եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

Մատենա է (էջ 1—17բ) արտադրու-թիւն մը այն Հաւատոյ դաւանութեան, զոր հրատարակած է Յովհ. Սկրոյեքեան լատի-ներէն թարգմանութեամբ եւ արտատպուած է 1780ին ի Լոնդոն, հայերէն եւ լատիներէն:

Թղ. 18ա. Prières que Niersès Pa- triarche des Arméniens fit à la gloire de Dieu, pour toute âme fidèle à Jésus Christ. De l'ère chrétienne 1170:

46.

ԴԱԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱԽԱՏՈՅ ՏԱՃԿԵՐԷՆ

Թ. 57: — ԺԸ.—ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ. 30: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14 × 10 հմ.: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԿԱԶՄ՝ խաւքաւայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 19—30: — ԳԻՐ՝ նոսր: — ԳԻԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

Մատենա է (թղ. 1ա—18բ) Դաւանու-թիւն վերմէք ուղղափառ վէ կաթողիկ տինի-միգէ կէլէնլարէ:

47.

ՔԱՐՈՉԳԻՐՔ

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՐՆԵՅԻՈՑ

Թ. 1: — 1728:

ԹՈՒՂԹՔ՝ 449: — ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 37 X 24.3 հմ.: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԻԹ՝ բուլք: ողորկ: — ԿԱՉՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ՝ քղ. 1—2, 437—439, 443—479: — ԳԻՐ՝ նոսր: — ԽՈՐԱԳԻՐՔ, ՍԿՁԻՆԱՏԱՌՔ՝ կարմիր: — ԳԻՐԻՉ՝ Յակոբ Կ. Պոլսեցի եպ. Ատամայի: — ՏԵՂԻ՝ (Հռոմ): — ԺԱՄԱՆԱԿ՝ 1728: — Կողմն վրայ եիմ քիւ՝ Գ: Թղ. 2ք. «Մարիամ եգիպտացոյ քիւ 4»:

Մատենան է՝ Բանք եւ ճառք յաղագս տէրունական տօնից եւ առուրց աղուհացից, եւ տօնախմբութեանց Մարիամու եւ սրբոյ Խաչին, շարագրեցեալ ի Խաչատրէ Երզրու-մեցոյ աստուածաբան վարդապետէ:

1. Թղ. 3ա. Բան առ Աստուած եւ առ սուրբս: Քանզի քեւ եմք, քեւ պահպանիմք...: Բան առ ընթերցողս: Տեսանելով զմերայինս գոլ յոյժ յօժարս առ ճառս եւ բանս, մանաւանդ առ աստուածայինս, հաճոյ թուեցաւ ինձ զկնի բարոյական աստուածաբանութեան՝ ընձեռել նոցա, որոց փափաքին: Եւ շարագրեցաք զճառս յաղագս տէրունական տօնից: Ի միասին շարագրեցուք եւս յաղագս տօնախմբութեանց սրբոյ խաչին եւ Աստուածածնի եւ առուրց աղուհացից:...

Բանք եւ ճառք... (որպէս ի վերոյ):

2. Թղ. 3ա. Բան եւ ճառ յղ. Ա. Կիւրա-կէի Գալստեան: Եւ եղիցին նշանք յարե-զակն... (Ղուկ. ԻԱ): Ծանուցանէ մեզ այսօր սուրբ Աւետարանն...

3. Թղ. 6ա. Բան եւ ճառ յղ. Բ. Կիւրա-կէին Գալստեան: Իսկ Յօհաննէս իբրեւ լուաւ ի բանտին... (Մատթ. ԺԱ): Այսօր յառաջագրի մեզ մեծազոյն խորհուրդ...:

Ընդ ամէնը 110 քարոզք. վերջինն է

4. Թղ. 433ա—437ա. Բան եւ քարոզ յա-ղագս Ընծայման Մարիամայ կուսին ի տա-ճարն: Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս, ձայն երարձ կին մի... (Ղուկ. ԺԱ): Երանեցեալ քարոզի ամէնօրնեալ կոյսն Մարիամ...:

5. Թղ. 440ա—բ. Որտա եւ օրհնութիւն ի նոյնոյ Խաչատրոյ աստուածաբան վարդապետէ: Արդ զքարոզագիրքս ընթերցողացդ... ի վերջնալ քարոզիցս յօժարաբար ձօնեցից զոմանս ընդհանրականս համառօտեցեալս խրատս...: Վչ. օրհնութիւն Հօր... մնացէ հանապազ ընդ ձեզ. Ամէն:

6. Թղ. 441ա—442ա. ցանկ բանից եւ քարոզից:

Խաչատուր Կարնեցոյ Բանք եւ քարոզք տպագրուած են Երկու հատորի մէջ, Վենե-տիկ 1710ին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 442ա. Յիշատակ է Քարոզգիրքս լիակատար վասն հոգւոյ տեսան Յակոբայ Կոստանդինու պօլսեցոյ եւ Ատանու եպիսկոպոսին. առ սուրբ Մարիամ եգիպտացին, որ է բնակարան ազգին Հայոց ի մեծն Հռոմ. որք հանդիպիք սմայ եւ վայե-լէք ընթեռնելով, յիշեալիք միով Հայր մերիւ ի մարմափայլ աղօթս ձերս. եւ դուք յիշեալք լինիջիք առաջի Քրիստոսի. ամէն: Գրեցաւ յամի Տեսուն Ռիժիճին (1728) եւ Ապրիլի ԺԵ.ին:

48.

ՔԱՐՈՉԳԻՐՔ

Թ. 39: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 117: — ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 19.5 X 14.3 հմ.: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱՉՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 1—3, 31—34, 66ք, 76, 114—117: — ԳԻՐ՝ նոսր-շղա-գիր: — ԳԻՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Հիմ քիւ՝ ԻԶ:

Մատենան է ժողովածոյ քարոզից. ուր կան.

1. Թղ. 4ա—31ա. Քարոզ ի վերայ Յօ-նանու մարգարէին: Եւ ասեն ցնա. Պատմեա՛ մեզ, վասն է՞ր են չարիքս այս մեծ... (Յօն. Ա. 8—10): Կարի յոյժ մեղադրելի է փախստական մարգարէն Յօնան...:

2. Թղ. 35ա. Հռոմայեցիք եւ եգիպտա-ցիք առաւել գիտունք: Կարկեալ պապան-ձեցի պղծաշուրթն բերանն Մանիքեցոց. Աստուած արար զամենայն ստեղծուածս՝ զերեւելիս եւ զաներեւոյթս...:

3. Թղ. 45—66ա. Եւ եղեւ մրրիկ մեծ ի ծովուն. Յօնանու զլ. Ա.: Ողորմելի նաւն ուր գտանի մարգարէն Յօնան, ծփայ ի ծովու...:

4. Թղ. 67ա—75բ. Քարոզ ի վերայ եկե-ղեցոյն Աստուծոյ, որ ի սուրբ գիրս կոչի քաղաք սուրբ, նոր Երուսաղէմ եւ տուն Աս-տուծոյ: (Ի բանն) Եկայք երթիցուք ի տուն Աստուծոյ... (Ես. Բ. 3): Եկեղեցին Աստու-ծոյ նմանի քաղաքի կառուցելոյ ի վերայ ապառաժի եւ անշարժելոյ վիմի...:

5. Թղ. 77ա—114ա. Ի յայլուստ առեալ գրեցի: Յաղագս խոտմանն աշխարհի: Որպէս Յիսուս Քրիստոս է ճանապարհ, առ որ մեք

պարտիմք ընթանալ...: Ա—Թ գլուխք, բո-լորն թարգմանութիւնք ԺԸ. դարու, որպէս թուի: Կողին վրայ փակցուած է պիտակս. «ԻԶ: Քարոզգիրք, այս ինքն այլ եւ այլ ճառք հոգեւորք, կամ քարոզք քաղուածոյք ի վե-րայ զանազան նիւթոց: Թարգմանեալ յիտա-լական գրոց. ձեռագիր նոր»:

49.

ՔԱՐՈՉԳԻՐՔ ԳՐ. ՏԱԹԵՒԱՅԻՈՑ

Թ. 45: — ԺԶ. — ԺԵ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 334: — ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 18.3 X 13.5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱՉՄ՝ քաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ գէշ: — Թուղքեր ինկած. կարմ-րագիր խորագիրք անընթեռնի, նաեւ սեղիր շատ էջեր: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԳԻՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆ-ՆԱԿ՝ անյայտ:

Մատենան է Քարոզգիրք Գր. Տաթե-ւացոյ:

1. Թղ. 1ա. Սկիզբէն թղթեր ինկած. մնացած է քարոզի մը վերջին մասը:

2. Թղ. 1բ. խորագիրք անընթեռնի: Գիտելի է զի ծէրն Սիմէոն Երիս արձակումս խնդրէ աստ...:

3. Թղ. 3ա. Քարոզ Քառասնից. Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր եւ հաներ ի հան-դիստ: Շարունակութիւնը անընթեռնի:

4. Թղ. 9ա. Ասացէք դստեր Սիոնի...: Սիոն ամբողջ էր Հրէաստանի...:

5. Թղ. 17բ. Նորին քարոզ Եչի. շար. անընթեռնի:

6. Թղ. 24բ. Նորին Գրիգորի քարոզ Մեծի շարաթուն ի բանն Որպէս էր Յունան ի փոր կիտին...: Որպէս. հրամայեաց Յու-նանու...:

7. Թղ. 35բ. Նորին քարոզ Մեծի Յա-րութեան. ի բանն Ապա թէ Քրիստոս է մե-ռելոց...: Եղեն ոմանք հերձուածողք...:

8. Թղ. 304ա—427բ. մանր բոլորգիր հատուածք յեկեց, ի Թուոց, Դեւտականաց, Բ. Օրինաց, Թագաւորաց. շատ փնասուած, ուստի զժուարրութեանի:

9. Թղ. 328ա—331բ. Երկսիւն կա՛մ լուծմունք իմաստութեան գրոց. կամ քարոզ ի բանն իմաստութեան:

10. Թղ. 332բ. Երկսիւն մանր բոլորգիր. Նորին քարոզ վասն ողկվարին ի բանն որ ասէ. Հայէի ի բարձունս...: Վարդապետք ասեն. յորժամ ելանէ հողին:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ: Թղ. 331բ. Նոսրագիր. Գիրք յիշատակ է Մէլեքէթ վարդապետին:

50.

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՊՕՆԱՅ ՅԱՂԱԳՍ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Թ. 7: — 1744:

ԹՈՒՂԹՔ՝ 163: — ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 26.3 X 19 հմ.: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱՉՄ՝ կաշեպատ սպիտակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 1, 2, 5—10, 11ք. 87—91, 147—163: — ԳԻՐ՝ նոսր-շղագիր: — ԳԻՐԻՉ՝ վրթանէս եպ.: — ՏԵՂԻ՝ Հռոմ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1744: — Հիմ քիւ ժԹ:

Մատենան է Յ. Պօնայի Յաղագս սըր-բազնութեան պատարագի:

1. ա. Թղ. 2—4. ցանկ գլխոց եւ հա-տուածոց:

բ. Թղ. 11ա. Յաղագս սրբազնութեան Պատարագի. ընձեռութիւն աստուածախո-հական. որ ներպարփակէ յինքեան զվարժե-ցումն մտադրաբար ջերմեռանդօրէն եւ մե-ծարանօք պատարագելոյ: Շարագրեցեալ ի վսեմագունեղէ քարտինալէն Յօհաննու Պօնայի: Թարգմանեցեալ ի հայկական բարբառ յամի Տեսուն ՌՈՂԸ. ի փառս Աստուծոյ եւ յօղուտ ճառանցից մերազնեաց: Ի Լէօպօլիս Վար-դան Յունանեան: Գրեցաւ ի Հռոմ Վրդանէս ձեռնագրող եպիսկոպոսին ձեռամբ 1742 ղեկտեմբերի ամսոյ:

գ. Թղ. 12ա. Առ քահանայս: Յաղագս կիրառութեան նպատակի այսր զրկանս նա-խաղողուչացումն սակաւուք քեզ յայսմ նե-րածականում յառաջարանութեան յուշ արա-րից...:

դ. Թղ. 13ա—86բ. Գլուխ Ա. նախագրին իրք ոմանք յաղագս ինքեան սրբազնութեան պատարագին...:

2. Թղ. 92ա—146բ. Քարոզ յաղագս չարութեան եւ փնասումեղաց (Ա—Զ. գլուխք կամ Քարոզք):

Ա. Յաղագս թէ մեղքն անարդան է Աս-տուծոյ: Չարմանալի է եւ համանգամայն յոյժ առելի պատմութիւնն այն...:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. — 1. Թղ. 11ա. Չգիրքս զայս չնորհեցի տէր Յուսէփ քահանային ինկուրեցոյ յիշատակ հոգւոյ իմոյ թիւն Քրիստոսի 1744ին:



2. Ձեռագրերն սկիզբը պահպանակ թղթի վրայ. վախճանեցաւ Երեմիայ վարդապետն 1743 մայիսի 6. օրն Բշկի (Երկուշարթի) :

51.

ՅԱՂԱԳՍ ՊԱԿԱՍՈՒԹԵԱՆՅ

Թ. 29: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 49: — ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 20.7 × 14.2: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ քղքեայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ 1—2ա. 39ք—49ք: — ԳԻՐ՝ նոտք: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Հիմ քիւ իթ: — Կողին ներսը՝ 38. Մարիամ եգիպտացուն:

Մատենան է Յաղագս պակասութեանց որք պատահին ի մատուցման պատարագաց:

Թղ. 2բ. Քահանայն ընդ մատուցանելն զսուրբ պատարագն...:

Թղ. 14ա. Նախապատրաստութիւն Ս. Պատարագ՝ Նախ պատրաստել զինքն առ պատարագս...:

Թղ. 14բ. Յաղագս արժանաւորութեան քահանային ի Ս. Օգոստինոսէ. Ով վերապատուելի արժանաւորութիւն քահանայից...:

Թղ. 15բ. Թէ որքան ծանրաբար մեղանչեցէ քահանայն... ի սրբոյն Ամբրոսիոսէ եւ ի Ս. Օգոստինոսէ:

Թղ. 16ա. Աղօթք նախ քան զխորհրդական խոստովանութիւն:

Թղ. 17. Աղօթք Ս. Թոմայի Աքունացւոյն առ Հայրն Աստուած:

Թղ. 18բ. Աղօթք Ս. Ամբրոսիոսի արհի-Եպիսկոպոսի:

Թղ. 25ա. Աղօթք Ս. Թոմայի (յետ պատարագի):

Թղ. 26բ. Աղօթք առ Աստուածորդին ի Ս. Բոնավենտուրայէ:

Թղ. 28ա—36. Օրհնութիւն Զրի. Մոխրոց. Տեանընդառջին մոմի. Դաստարակաց կամ Պատառակալից. Գործօրայից. Գառան ի դատկին. Ռօղարեաց. Քահանայական զգեստուց:

Թղ. 37ա—39ա. Կանօն հանդերձեղէն սպաս օրհնելոյ: Տանին յեկեղեցին առաջի բեմին...:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 2ա. Կտորեւ. «Միմէօն արքեպիսկոպոս Գաղա-տիոյ»:

2. Ա. կողին վրայ պիտակ. «ԻԹ. Պատ-րաստութիւն պատարագի եւ Մաշտոց թարգ-մանեալ ի լատինէ ի ձեռն Սիմէոնի արքե-պիսկոպոսին Գաղատիոյ»:

52.

ԴՈՒԹՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Թ. 54: — 1702—1731:

ԹՈՒՂԹՔ՝ 72: — ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 15 × 10: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշի սպիտակ: — ՀԱՆ-ԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 65ք—72: — ԳԻՐ՝ նոտք: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ. գրուած 1702—1731 տարիներու մէջ: — Հիմ քիւ ԼԸ: — Կողին ներսը՝ Մա-րիամն եգիպտացոյ. || 4:

Մատենան է Երկմասնեայ.

Ա. Թղ. 1—49ա. Դուռն ողորմութեան Աստուծոյ. նուիրեցեալ ամենապայծառ խօճայ Սահրատի որդոյ պարոն Մուրատին ի Ստե-փաննոսէ Ստեփանեան քահանայէ Կամէնոյ: Յամի Տեառն 1702. եւ Հայոց ՌՃԾԱ. յու-լիսի Բ. ի Վէնէտիկ: Ամենապայծառ պարոն: Ընդ անուամբ աղնուականութեանդ քո ար-ժանապէս ի լոյս արտադրի...:

Արտադրուած է գրոցս 1702ի հրատա-րակութենէն:

Բ. Թղ. 49բ—63բ. Զերմեռանդութիւն առ Երանուհի կոյսն Մարիամ Աստուածա-ծինն յաղագս եօթանց աւուրց եօթներորդի:

Վասն աւուր Կիրակէի. Ողջոյն քեզ, ով ամենասրբուհի կոյս Մարիամ, որ ընտրե-ցար ի յԱստուծոյ ի մայրութիւն... (Կիր.—Շր.):

Թղ. 62ա. Երգ սրբուհոյ Աստուածա-ծինն.

Ողջոյն քեզ ով աստղ ծովային,
Սրբուհի մայր Աստուածածին...

Թղ. 63բ. Թարգմանեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպօլսեցոյ ի փառս մեծազոյնս Աստուծոյ. ի խնդրոյ Գրիգորի որդւոյ Նասիպ Ազուլեցոյ:

Թղ. 64ա—65ա. Աղօթք վասն հնկից վի-րացն Քրիստոսի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Ձեռագրին սկիզբը պահպանակ թղթի երկրորդ էջի վրայ. «Յիշատակ է այս գիրքս տեառն Սար-

գիս եպիսկոպոսին Թոխատեցոյ սուրբ Մա-րիամ եգիպտացոյ եկեղեցոյն թվին Քրիս-տոսի ՌՁԼԱին օգոստոսին ժԸին:

53.

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ԳԵՂԵՑԻԿՔ

Թ. 17: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 60: — ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 22.2 × 15.7 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոտք: — ԽՈՐԱ-ԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ ան-յայտ: — Հիմ քիւ իԳ:

Մատենան է Մտածմունք գեղեցիկք:

1. Թղ. 1ա. Մտածմունք գեղեցիկք, որք զմիտս մարդոյն ընդոստուցանեն ի սէր Աս-տուծոյ: — Տէր իմ վասն այն ստեղծեր զիս, զի սիրեցից դեղ...

2. Թղ. Տա. Յաղագս արժանապատու-թեանց քահանայից սեփօրէն: — Խորհեցայ, թէ որքան վսեմապայծառք անուանը ի սրբոց գրոց եւ հարց՝ քահանայից առատրիցին...:

3. Թղ. 22ա. Յաղագս նիւթոյ եւ տե-սակի սրբազնութեան:

4. Թղ. 32բ. Յաղագս խոստովանու-թեան: Յաղագս որպիսութեան բարւոյ խոս-տովանութեան:

Թղ. 41բ. Ըստ չափէտութեան Լըջին օծման սրբազնութեան:

6. Թղ. 46ա. Յաղագս խորհրդոյ պոս-կին:

7. Թղ. 49ա—58ա. Աղօթք զանազանք:

8. Թղ. 58բ (ա՞յլ գրչէ մանր նոտք.) Աղօթք ամենասրբուհի Կուսին Մարիամու, թարգմանեցեալ ի լաթին լեզուէ: Այր մի էր անապատական, պարկեշտ...:

9. Թղ. 60ա. Կանոնք վասն նոցա, որք գրեալք են այսմիկ ջերմեռանդութեան՝ բարի մահուան:

Կողին վրայ փակցուած պիտակի վրայ. «ԻԳ: Մտածմունք ի ձեւ աղօթից յու-մեմնէ ի յետին բանասիրէ անհարթ շարա-գրեալ»:

54.

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՒՈՐ

Թ. 47: — 1758է յառաջ:

ԹՈՒՂԹՔ՝ 12: — ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 17.5 × 12: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ չուխ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 1, 12: — ԳԻՐ՝ նոտք: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

Տետրակս է «Կրթութիւն աւուր առանձ-նութեան: Յաղագս նախապատրաստութեան բարի մահուամբ մեռանելոյ: Յամեսանն մի անգամ առնելի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 1բ. Յովսէփս Ազգրմանեան ստացայ 1758 մ. 16:

2. Թղ. 2ա. ի լուսանցս. ի Գրիգորէ վարդապետէ Ազնեցւոյ, ի միաբանէն Երու-սաղէմայ, յիշատակ Հայոց Հիւրանոցին Հոսմայ. յօգ. ամի Տեառն 1797:

55.

ՏԵՏՐԱԿ ՔԱՒՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՈՅ

Թ. 49: — ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 16: — ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 16.8 × 10.2: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ քղք զմ: — ՀԱՆ-ԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 16: — ԳԻՐ՝ նոտք: — Հիմ քիւ՝ ԾԸ:

Մատենան է Տետրակ փառքեան տար-ւոյն, այս ինքն Մեծ Յոքի(ե)անի:

Թղ. 1ա. Առաջարանութիւն: Որք փա-փաղին ընդունել զներողութիւնս այս մեծ... (զանազան աղօթքներ):

Թղ. 3ա. Կայարան Ա. Յեկեղեցի զլիսա-ւոր Հայոց որ ի քաղաք է: Առաջի մեծ բեմի:

Թղ. 6ա. Ամենակարօղ եւ մշտնջենաւոր Աստուած ողորմեա ծառայի քո Փիօսի վեցե-րորդի փափին մերոյ...:

Թղ. 7ա. Կայարան Բ. առաջի սեղանոյ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ի զլիսաւոր եկեղեցւոյ Հայոց:

Թղ. 7բ. Կայարան Գ. առաջի սեղանոյ սրբուհոյ Մարիամայ եղբայրակցութեան յե-կեղեցի զլիսաւոր Հայոց:

Երգ. Ողջոյն քեզ աստղ ծովային...

Թղ. 8բ. Յերկրորդ եկեղեցի Հայոց, որ է սրբոյ Խաչին:

Թղ. 11ա. Յեկեղեցի Գ. Հայոց որ է սուրբ Աննայի:

Թղ. 13ա. Յեկեղեցի Դ. Հայոց, որ է Ս. Յակոբայ Նիսիբեցի:

Թղ. 14բ—15բ. Երգ. ըզքեզ Աստուած զովաբանեմք...:

56.

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թ. 60: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 95: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 11.7. X 7.5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ 89—95: — ԳԻՐ՝ նոտր.: — Նկարք տպագիր, ներքեւ հայերէն. 2բ, 44բ, 65բ, 74բ, 83բ: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ 3ա, 45ա, 66ա, 84ա: — ԽՈՐԱՆ՝ տպագիր՝ 3ա: — ԶԱՐԴՔ՝ 6ա, 31բ, 41բ, 60ա, 82բ, 86ա, 88բ:

Մատենան է Աղօթագիրք, ուր կան.

Թղ. 3ա. Աղօթք Ս. Գրիգորի Նարեկացւոյ (քաղուածք մանր հատուածներով):

Թղ. 75ա. Նախապատրաստութիւն առ սուրբ պատարագն:

Թղ. 84ա. Աղօթք զկնի հաղորդութեան: Յոհաննու Ոսկերեանի. Գոհանամ եւ մեծացուցանեմ. եւ այլ աղօթք Ս. Բեռնարդոսի, Ս. Թովմայի Ագուլիանցւոյ. եւ այլն:

Գրիչ հաւանորէն մին ի Մխիթարեան Հարց: Տեղի եւ ժամանակ անյայտ:

57.

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թ. 61: — 1682էն յառաջ:

ԹՈՒՂԹՔ՝ 65: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 11.2 X 7.4: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱԶՄ՝ լատիներէն մագաղաբեայ բուլք, վրան մանրամկար գիմանշան (°): — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոտր.: — ԳՐԻԶ՝ Գոմիկոս Բախման: — ՏԵՂԻ՝ անյայտ: — ԺԱՄԱՆ՝ ՆԱԿ՝ 1682էն յառաջ:

Մատենան է Աղօթագիրք, ուր կան.

Թղ. 1ա. Խրատ յաղագս բարեք խոստովանելոյ մեղս: — Նախ քան զխոստովանելն պարտ է յաւուր յառաջ քննեցէ զինքն...: Կից Աղօթք խոստովանութեան եւ հաղորդութեան, Սաղմոսք, Հաւատով խոստովանիմ:

Թղ. 51բ—55բ. Խրատք բարեք եղբայրք, Որդեակ ի տանէ ոսոխէ քոյմէ պատրաստ կացիր, եւս առաւել ի կնոջէ լեզուանո... (մասամբ քաղուածք ի Ս. Գրոց: Կան նաեւ ռամկօրէն առածներ.

Թղ. 54ա. Նուշ ու չէքէր ուտելն ինչ անիմ, երբ տան իմում զառնիճ կայ:

Նարինճ ու թուրինճն ի վերայ սարին ով է տեսեր:

Կնոջ անդամի լեզուանո բերանով քաղար զրուց ով է տեսեր...:

Ի մանկութենէ իմմէ բազում աշխարհս շրջապեցա, Հնդստան ու Աճէնխտան Գրտտան, Արապխտան եւ Տաճկաստան. եկեալ հասա ի Փոքնկիտան. ի տան իմում բուսալ մէկ կին անդամ. ա՛յ խեղճ ու սէֆիլ տէր Կիրակոս (ծածկադիր). այլ քեզի ճար չի կայ. համբերա՛, համբերեա...:

Թղ. 56ա. Մախտանք առ Տէր Յիսուս Քրիստոս. Ով Տէր իմ Յիսուս Քրիստոս ծնեալ ես ի Հօրէ... (յօրինուած առթիւ անդամ կնոջ):

Թղ. 58. Մխիթարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որդեակ ոչ երբեք զթցես զապահովութիւն...:

Թղ. 61բ. Ընդդէմ ունայնից դատողութեանց մարդկանց... (Թղ. 58—65. կը թուի քաղուածք Նմանութիւն Յիսուսի գրքէն), Ա. կողին ներսը. «1682, նոյեմբերի 9. Երդուն զորս երգուա... Կիրակոս |||| ծածկադիր):

58.

ԳՐԴՈՅԿ ՈՐ ԿՈԶԻ ՄՏԱԾԱԿԱՆ

Թ. 66: — 1729:

ԹՈՒՂԹՔ՝ 87: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 9.7 X 7.3: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոտր.: — ԳՐԻԶ՝ տէր Օհան: — ՏԵՂԻ՝ ձուրմով: — ԺԱՄԱՆՆԱԿ՝ 1729: — Հին քիւ խճ:

Մատենան է Գրքոյի Մտածականի, ուր կան.

1. Թղ. 1ա. Աղօթք առ... Անունն Յիսուս...: Եկ, Տէր Յիսուս, եկ եւ հան զմեզ ի մր(բ)կաց աշխարհիս...:

2. Թղ. 3ա. Յաղագս մատնութեան Յուդայի:

3. Թղ. 7ա—39ա. Մտածութիւն ի վերայ չարչարանացն Քրիստոսի:

4. Թղ. 39բ. Աղօթք առաւօտեան:

5. Թղ. 46բ—58ա. Մտածութիւն յղ. մահուան, դժոխոց, Անառակի:

6. Թղ. 58բ—71. Նշանակութիւնք խորհրդոց Ս. Պատարագին եւ Չարչարանաց Տեառն (Աղօթքներ):

7. Թղ. 71ա. Հինկ խնդրուածք... յաղագս բարեպէս մեռանելոյ...:

8. Թղ. 76ա—80բ. Լիթանեայք Ս. Ստեփանոսի Նախավկային եւ Ս. Գրիգորի Լուսաւորչի:

9. Թղ. 81ա. Երգ առ հայրն մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչ.

Ի քէն հայցեմք արտասու[ալի] ելով սուրբ Կոյս առ քեզ պաղատելով, առաջի քո ծունր դնելով, զօրհնութիւն ի քէն խնդրելով...: Տունք՝ ի Մանուէլէ երգս ասացեալ:

10. Թղ. 83բ. Երգ Յարութեան Տեառն: Անճառելի Բանդ հայրական ալելուա. ալէ՛: Անեղակից զոյ անսահման...:

11. Թղ. 84ա. Այլ երգ Մարմնոյ եւ Արեան Տեառն.

Գոյին փառք պատիւ. Տէր մեր յարակայ:

12. Թղ. 84բ. Երգ Ծննդեան Տեառն

Մանուկ ծնաւ ի Բեթղէհէմ, Ուստի ցընծայ Երուսաղէմ...:

13. Թղ. 86ա. (այլ գրչէ).

Աստվածածին կոյսն Մարիամ

կայր այր (առ) խաչին իւրոյ միածնին...:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 85բ. Շնորհօք... Աւարտեցաւ զըրկուկս որ կոչի Մտածական. եւ ըստ թուարեութեան Հայոց ՌՃՀԸ (1729), մայիսի Ը. ի երկիրն Մաճարաց ի զիւղաքաղաքն ձուրձով սէնդ Միգլուշն եւ զժաղրութեամբ տէր Օհանի Սահկեան: Արդ աղաչեմ զքեզ, ով բաղձալի ընթերցողք զփոքրատեսակ մատենիս մի մոռասջիք զվերոյ զեալքս յիշել առ Տէր ի մաքրափայլ յաղթիս քոյ...:

59.

ԱՂՕԹԱՏԵՏՐԻԿ

Թ. 67: — 1727:

ԹՈՒՂԹՔ՝ 132: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 10 X 6 հմ.: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱԶՄ՝ կաշի ոսկեգրուգ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ 1—3ա. 128—132: — ԳԻՐ՝ նոտր.: —

Մատենան է Աղօթատետրիկ, ուր կան.

1. Թղ. 4ա. Աղօթք կամ մտածութիւնք զանպանք յաղագս Չարչարանաց Տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի: — Աստուած, որ վասն փրկութեան աշխարհի կամեցար ծնանիլ...:

2. Թղ. 27ա. Լիդանիա Աստուածածնի. կից աղօթքներ:

3. Թղ. 37ա. (Լիդանիա) Պաղատանք առ Անունն Յիսուսի:

4. Թղ. 45ա. Աղօթք երանելոյն թովմասու Աբուխնացւոյ: — Շնորհեա ինձ, ողորմած Աստուած, ոյք քեզ հաճոյք են...:

5. Թղ. 51ա. Այլ աղօթք եր. Թովմասու Աբուխնացւոյ նախ քան զընթերձումն. Արարիչ անճառելի:

6. Թղ. 53ա. Աղօթքներ փորձութեան: — Ով քաղցր Տէր Յիսուս Քրիստոս...:

7. Թղ. 64—184. Աղօթք Խոստովանութեան, Հաղորդութեան:

8. Թղ. 98ա. Լիթանիա որ է պաղատանք առ վերապատուելի խորհուրդն:

9. Թղ. 123ա. Աղօթք յառաջ քան զպատարագն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. Թղ. 127բ (էջ 248). Գրեցաւ Աղօթատետրիկս ի թուոյն փրկչի Ռէճիէ (1727) եւ ի Հայոց թվոյն ՌՃՀԶ. եւ փերվար ամսոյ հինկն, ձեռամբ անիմաստ Յակոբ Եպիսկոպոսի Կոստանդնուպոլսեցւոյ:

2. Թղ. 3բ. Յիշատակ է Մտածական աղօթից զըրկուկս վասն հոգւոյ տեառն Յակոբ Կոստանդնուպոլսեցւոյ եւ Եպիսկոպոսին բայ Կոստանդնուպոլսեցւոյ եւ Եպիսկոպոսին Ատանոյ, առ սուրբ Մարիամ Եղիպտացին, որ է բնակարան աղբին Հայոց ի մեծն Հոռոմ, որ է հանդիպիք սմա՛յ եւ վայելէք ընթերցելով յիշեալիք միով Հայր մերիւ ի մաքրափայլ աղօթս ձեր եւ դուք յիշեալք լիջիք փայլ աղօթս ձեր եւ դուք յիշեալք լիջիք առաջի Քրիստոսի: Գրեցաւ յամի Տեառն Ռէճիէին եւ ապրիլի Ժեին:

60.

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թ. 59: — ԺԵ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 168: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 12.4 X 9: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 161բ—168: — ԳԻՐ՝ նոտր.: — Ա. ԿՈՂԻՆ ՆԵՐՍԸ՝ Մա(րի)ամ Եպիսկոպոս քիւ 91:

Մատենան է Աղօթագիրք. կը պարուհանէ.

1. Թղ. 1ա. Յորժամ ի մէջ ներդրեալն
իցես՝ ասայ զԱղօթս... Անսկիզբն Հայր Աստուած յաւիտեանական...:

2. Թղ. 3բ. Խրատք աղօթելոյ, յորժամ
անկանիս ի մէջ վտանգի:

3. Թղ. 6ա—17ա. Խրատ Սիրաքա որդոյ
Եսուա իմաստնասիրի: Գլ. Ժէ. Թիւն ԻԹ. Ողորմութիւն առն իբրեւ զԵրօշմիկ ընդ
ինքեան...:

4. Թղ. 18ա. Խրատք վասն բարեւոյ խոստովանելոյ զմեզս իւր: Նախ քան զխոստովանութիւնն խորհեաց ի քեզ...:

Կից Աղօթք Խոստովանութեան եւ Հաղորդութեան:

5. Թղ. 26ա—53բ. Տէր ամենակալ Աստուած Աբրահամ...: Կից՝ Սաղմոսք ապաշխարութեան եւ Հաւատով խոստովանիմ:

6. Թղ. 54ա. Լիթանիա Ս. Աստուածածնի եւ այլ աղօթք:

7. Թղ. 62բ. Լիթանիա ամենից սրբոց եւ այլ աղօթք:

8. Թղ. 73ա. Լիթանիայք վասն մեռելոց եւ այլ աղօթք:

9. Թղ. 87բ. Զերմեռանդութիւն առ եօթն վէրս զլիաւորս ամենաորրորդէն կուսին Մարիամու:

10. Թղ. 89ա. Զերմեռանդութիւն առ եօթն խնդութիւնս, որովք զմայլի սրբուհին մեր յերկինս:

11. Թղ. 96ա. Ներսիսի Կլայեցւոյ... Նորոգող տիեզերաց...: Կից շարականք ապաշխարութեան, եւ այն:

12. Թղ. 147բ. Սաղմոս(ք) Աւետարանին (քաղուածք Սաղմոսարանէ):

13. Թղ. 151բ. Քաղուածք յԵսայեայ, յԱւետարանաց:

14. Թղ. 157ա. Երբ ննջեցելուց: Աստուած անեղ անժամանակ...: Հայր անսկիզբն...:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Վերջին կողին ներքը. Ես թօխաթցի տէր Կիրակոս ծննդեան իմում թվին հայկազանաց ՌԾԵՈՒՄ (1606) է: Ա. կողին ներքը. Libretto... ինչպէս Թ. 8. Հոս կայ կնիք մ'ալ + եւ EUNTES. IN. UNIVERSUM. PRAEDICATE. EVANG. OMNI. CREAT. չըջանակի մէջտեղ Յիսուս դարձած առաքեալներու:

61.—62.

ՋԵՐՄԵՆՈՒՆԻ ՏՈՒՎԱԼԱՐ

Թ. 62—63: — 1810:

ԹՈՒՂԹՔ՝ 39 (էջ 78): — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 11.3 × 9: — ՆԻԻԹ՝ քուղք: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ (Թ. 62 վերի դրսի անկիւնը մկնակեք): — ԳԻՐ՝ նոսր:

Մատենա է Աղօթադիրք իտալերէնէ թարգմ. Թուրքերէնի:

Թղ. 1. Զերմեռանդ տուվալար սուրբ Աստուածածինէ հաճախուն հէր կիւնիւ իչին: Թալեանճատան թիւրքէյէ թերճիւմէ օլունտու սուրբ Աստուածածինին իղէ-թինէ: Սէնէ 1810, Նոյեմբ. 20 (Թ. 62՝ Նոյեմբ. 21):

Թ. 62, էջ 54. զրուած է. «Անտոն Հասուն»:

63.

ՏՕՆԱՑՈՅՑ

Թ. 30: — ԺԼ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 135 (էջ 246): — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 20.5 × 16 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 1—2, 246: — ԳԻՐ՝ նոսր: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ հատածնքով սկզբնատառք՝ կարմիր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: — Հիմ քիւ իւ:

Մատենա է Տօնացոյց եւ Աւետարանացոյց ըստ ուղղափառաց Հայոց: Դեկտ. ԻԴ. Ճրագալոյց Ծննդեան Տեառն...:

էջ 241. «Զգծադրօղս մի մոռանայր ով եղբայր սիրելի միով Հայր մերիւ յիշել, եւ զու յիշեալ լիցիս»:

64.

ՏՕՆԱՑՈՅՑ

Թ. 31: — 1768:

ԹՈՒՂԹՔ՝ 108 (էջ 202): — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 21.3 × 16: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 1—4, 103—108: — ԳԻՐ՝ նոսր: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ սկզբնագիրք հատաւածոց՝ կարմիր: — ԳՐԻԶ՝ Օհանէս որդի Ծիրիկի: — ՏԵՂԻ՝ էլիգապէք քաղաք Հայոց: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1768: — Հիմ քիւ՝ իբ:

Մատենա է Տօնացոյց ըստ ուղղափառաց Հայոց (տե՛ս Թ. 63):

էջ 202. Գրեցաւ Տօնացոյցս ձեռամբ անարժան տիրացու Օհանիս ո. հ. ծէրկիկ որդւոյ. ի տոհմէ Քոսայ Սահակեան: Յամի Տեառն

1768. մարտի 17. ի էլիգապէթ Հայոց քաղաքն: Արդ ով վայելող կամ ստացող մի մոռանայր զգծադրօղս միով Հայր մերիւ եւ ռղջունիւ յիշել, զի եւ զու յիշեալ լիցիս ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: Թ. 1ա. 1768. ex Libris R. D. Marcelli...:

65.

ԷՖԻՄԵՐԴԵՍ

Թ. 53: — 1731էն յառաջ:

ԹՈՒՂԹՔ՝ 28: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 15.6 × 10.2: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշի սպիտակ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 23—27: — ԳԻՐ՝ նոսր: — ՍԿԶԲՆԱՏՈՂՔ՝ կարմիր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ. 1731էն յառաջ: — Հիմ քիւ՝ ԼԵ:

Մատենա է Էֆիմերդէս, անխորադիր. կը սկսի.

Թղ. 1ա. Թուական Քրիստոսի 1698, 1726, 1754, 1782: Արդ կարգեացուք աստ զմշտնջնաւոր տարեկան փոփոխութեանց զուշակումն...:

Թղ. 18ա. Մշտնջնաւոր զուշակումն սակս հոգմոց եւ եղանակաց տարոյն յամսէ ամիս: Յունուար առաջին օրն ցուցանէ զօղ եւ զեղանակ... (Յունվ.—Դեկտ.):

Սկիզբը պահպանակ թղթի Բ. էջի վրայ. «Յիշատակ է այս զիրքս տեառն Սարգիս վարդապետին թօխաթեցւոյ եւ եպիսկոպոսին Ծննդոյ՝ եկեղեցոյն Մարիամու էզիպտացոյն: Թվին Քրիստոսի ՌԶԼԱին, Օգոստոսի ԺԼ.ին:

66.

ՀԱՄԱՌՕՏԱՐԱՆ ՀՌՕՄԷԱԿԱՆ

Թ. 9: — ԺԵ.—ԺԼ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 21: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 26 × 19: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ քղքեպ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Դատարկ քղ. 1բ, 19—21: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ:

Մատենա է «Համառոտարան Հոսմէական ի վճռոյ սրբազանի ժողովոյն թրիտէն-թինոյ վերանորոգեցեալ եւ Փիոսի հինգերորդի այլ եւ Կղեմայ ութերորդի վեհադուստից հայրապետաց հրամանաւն, նախ ի լոյս ածեցեալ: Իսկ այժմ վերստին Ուսպանոսի ութերորդի փափին հեղինակութեամբն վե-

րաճանաչեցեալ, հանդերձ ժամակարգութեամբն կարգեցելովք յԱլէքսանտրէ եօթներորդէ. եւ այլովքն բնաւիւք, թէ շարայարեցելովք, եւ թէ ծիսիւ յաւելեցելովք, ի Կղեմայ Ժ.է մինչեւ ցայս օր:

Թարգմանեցեալ ի դադափարէն տպագրեցելոյ ի Վէնէտիկ, ներ տպարանում Կուկէրիւսեանց յամի Տեառն ՌՈՀ:

Թղ. 2ա. Փիոս եպիսկոպոս ծառայ ծառայիցն Աստուծոյ, առ ի մշտնջնաւոր յիշատակ իրացս: — Զոր պահանջէ ի մէջ վստան (°) Հովուականի պաշտաման...:

Թղ. 5բ. Ի պատմիկարանէ վճռոյ սրբազանի զուսմարին ծիսից ստորագրեցեալքս այսոքիկ պատկանին առ Համառոտարանն Հոսմէական: Breviarium Romanum, այն է Հոսմէական Տօնացոյցի կարգաւորութեան մասին որոշումնք:

Թղ. 1ա. ստորեւ. «Պ. Տեառն Յոհաննու Աղարեանց, յամի Տեառն 1751:

67.

ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՒԱԳՈՒՄՆ ԼԱՏԻՆ ԲԱՌԻՑ

Թ. 35: — ԺԹ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 230: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 20.6 × 14.6 հմ.: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — Կազմը քուլացած, տեղ տեղ խոնավութիւն կրած: — ԳԻՐ՝ նոսր-շղագիւր: — Թղ. 1ա կիսախորանիկ: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ: Սկիզբը պահպանակ քուղքի վրայ կնիքս. Բահայ. Դպրոց. Roma Po. Coll. Armeno:

Մատենա է «Հատընտիր Հաւաքումն լատին բառից»: Կը սկսի.

Ա. Նախադրութիւն, որ խնդրէ զհոլովն բացառական եւ յարի անուանց յաւելոյ ի բացառայնից. Ի. առ ի, յ. առ յ. առ, ընդ, ըստ, վասն, զ. ի մէջ, հետէ, յորմէ հետէ, բաց ի, զկնի, քան յառաջ, քան շուրջ, ի ձեռն:

Abocor, վարիչ, վտարակ, հոտակապուտ, խաշնադոդ, խաշնավար. եւ այլն:

Կաւարտի՝ Zygostates. զիւղոստառ: Zythum. դարօղի:

Ոնամով պատրաստուած լատ.—հայերէն բառարան:

ՎԵՐՁ

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ